


ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹԻՒՆ**

Յիսուս երբեք կազմակերպական աշխատանք մը չկատարեց։ Ան՝ հոգեւոր ճշմարտութիւնները աւանդեց իր աշակերտներուն, առանց զանոնք վարդապետական անխախտ գրութեան մը մէջ ամփոփելու։ Բառին իսկական առումով Ան կրօնք մը չհաստատեց, իր յարակից բոլոր կազմակերպական մասերովը։ Յիսուս ո՛չ ալ կազմակերպեց Քրիստոնեայ եկեղեցին, խաչելութեան վաղորդայնին Անոր բոլոր հետեւորդները անկազմակերպ երեւոյթ մը ունէին։ Ան միայն ապրեցաւ կեանք մը, զծից ուղի մը, որ զինքը առաջնորդեց զէպի Գողգոթա, բայց որ վերջացաւ յարութեամբ։ Յիսուս միայն իր աշակերտներէն պահանջեց որ Իրեն հետեւին, ընթանալով ճիշդ Իր քալած ուղիին վրայէն։ Յիսուսի հետեւորդները առաջին անգամ Անտիոքի մէջ Քրիստոնեայ կոչուեցան, իսկ մինչեւ այդ անոնք կը կոչուէին այլ անունով, եւ ճամբայ ըսելով կ'անհարկուէր այն ապրելակերպին, որ զմուսած էր Յիսուսի կենդանի օրինակով։

Անշուշտ իրերը այսպէս չէին կրնար շարունակել։ Յիսուսի աշակերտները եւ նաեւ նաեւ Սբ. Պողոս սկսան վերլուծել այդ կեանքը, սխալման իրերով յայտնել եւ ուսուցանել անկէ քաղուած ճշմարտութիւնները, զանոնք

ընդհանրապէս մը վերածելով։ Այս սկիզբն էր քրիստոնէական կեանքի հոգեւոր արժէքները կազմապարելու եւ ձեւելու ջանքին որ յաջորդ դարերուն մէջ աւելի բարդ եւ բազմազոյն կերպարանք մը ստացաւ։ Այս սկիզբն էր Յիսուսի կեանքէն կրօնք մը յառաջանելու զործողութեան, իր գաւառանքներովը եւ զանազան հաստատութիւններովը։ Յիսուս անկերպանցելի կեանք մը թողուց իր ետեւ, իսկ հետեւորդները այդ կեանքը արտայայտելու համար պէտք եղած բոլոր կազմապարները եւ զայն զարգացնելու համար պէտք եղած բոլոր օրինակները յառաջ բերին։

Ներկայիս Քրիստոնէութիւնը երեք տարրերէ կը բաղկանայ, երբայական, Հիթանոսական եւ Քրիստոնէական։ Պատմական Յիսուսը, արեւմտեան երբայեցի, ծնաւ անանցաւ, ապրեցաւ Հրեայ ցեղին մէջ։ Ան իր զաղափարները եւ վարդապետութիւնները յայտնելու համար փոխ առաւ շատ մը բացատրութիւններ, որոնք զործածական էին Հրեայ կրօնական շրջանակներուն մէջ, անոնց տալով աւելի հոգեւոր եւ խորունկ իմաստներ։ Եթէ Ան ծնած ըլլար ուրիշ ազգի մը մէջ՝ մեր քրիստոնէական շատ մը բացատրութիւնները բոլորովին տարբեր պիտի ըլլային։ Քրիստոսի անմիջական հետեւորդները եւ Քրիստոնէութեան է՛ն հեղինակաւոր վարդապետները Հրեաներ էին, որոնք իրենց հետ միասին բերին իրենց հրէական զաղափարները, զի-

տեղիքները բացատրութիւնները, զօգելով զանոնք Յիսուսի վարդապետութիւններուն հետ. իսկ երբ Քրիստոնէութիւնը սկսաւ մուտ գործել հեթանոս ազգերու մէջ, երկրորդ տարր մ'ալ բարդուեցաւ անոր վրայ: Շատ մը հեթանոսական գաղափարներ, սովորութիւններ, տօներ, Քրիստոնէութեան մասը կազմեցին նորագործ հեթանոսներու միջոցաւ, որոնց համար անկարելի եղաւ մտնալ իրենց հին կրօնական ժառանգութիւնը: Այսպէս այն ճամբան, այն կեանքը որ զծնած էր Մեծ Վարդապետին կողմանէ, բոլորովին կերպարանափոխուեցաւ: Հիմայ Քրիստոնէութեան որ եւ է մէկ ձեւը: Ուէ մէկ եկեղեցին կը պարունակէ իր մէջ այս երեք տարրերը տարրեր համեմատութիւններով:

Քրիստոնեայ եկեղեցիին առջեւ երկու գերագոյն պարտականութիւններ կան կատարելիք: Քրիստոնէութիւնը երբեք չէ հաւատարած Յիսուսի կեանքին, ան իր է՛ն բարձր ձեւին մէջ իսկ պարունակած է ոչ-Քրիստոնէական, ոչ-Յիսուսեան տարր մը: Քրիստոնեայ եկեղեցին պէտք է մերկանայ ոչ-Քրիստոնէական այն բոլոր տարրերէն, որոնք անհրաժեշտ չեն եւ նոյնիսկ արգելք են հոգեւոր կեանքի զարգացումին: Քրիստոնէութիւնը պէտք է վերածել իր կարելի պարզագոյն վիճակին: Բայց պէտք չէ հասկնալ թէ բոլոր ոչ-Քրիստոնէական տարրերը անպատճառ աւելորդ եւ վնասակար են: Յիսուսի կեանքը ուէ մէկ ձեւով պիտի արտայայտուի, գործածական բացատրութիւններէն փոխառութիւններ պիտի ընէ, ընկերային սովորութիւնները, ֆիզիկական պայմանները, ցեղային յաակութիւնները, մշակութային ստորձանը մեծապէս պիտի ազդեն անոր ու պիտի կերպարանափոխեն զայն: Բայց այս բոլորը պէտք է նպաստեն այդ կեանքի ունեւորումին եւ ոչ թէ արգելք հանդիսանան անոր: Եթէ Յիսուս կազմակերպած ըլլար եկեղեցին, հաստատած անոր գաւառական ձեւերը, որոշած անոր արտայայտութեան կերպերը, Քրիստոնէութիւնը չպիտի կրնար յառաջդիմել եւ ինքը արգելք պիտի ըլլար յառաջդիմութեան: Բայց Յիսուս այս առժամայ բոլոր գործերէն մէկդի կեցաւ եւ ազատ թողուց իր հետեւորդները, որպէս զի անոնք իրենց պայմաններուն յարմար ձեւով արտայայտեն

զայն: Քրիստոս՝ որ նոյնն է այժմ եւ միշտ, տարրեր ժողովուրդներու մէջ տարբեր կերպարանքներով կ'արտայայտուի: Հնդկը չի կրնար ըմբռնել Յիսուսը Հայու մը պէս, Գերանացի մը չի կրնար զիտել զԱյն Հրէի մը պէս, հետեւաբար իւրաքանչիւր կրօնական փորձառութիւնը կը տարբեր իրարմէ: Այսօր շատ մը տարրեր յարանուանութիւններու պատկանող միսիօնարներ ոչ-քրիստոնեայ ժողովուրդները Քրիստոսի շահելէն վերջ կը միտին ազատ ձգելու զանոնք, որպէս զի իրենց կերպերովը արտայայտեն Յիսուսի կեանքը: Այսպէս ահա յառաջ կուգայ Հրեայի, Չինական, Եւսէպն, քրիստոնէութիւնները:

Քրիստոնեայ եկեղեցիին պատգամը պէտք է ըլլայ Քրիստոս ինքը, եւ ոչ թէ Անոր կեանքին՝ ուէ խումբին մէջ արտայայտուած եւ հաստատուալ մէկ ձեւին: Մարդիկ կը կարօտին Յիսուսի անձնագործութեան, ոչ թէ գաւառականներու, հաստատուալ կարգերու եւայլնի: Ժողովուրդները պէտք է ազատութիւն վայելին Քրիստոսի կեանքը արտայայտելու, այն ձեւով, որ իրենց կեանքի պայմաններուն եւ իրենց ապրած ժամանակին պահանջներուն համապատասխան է: Այսպէս ամէն մէկ ժողովուրդ շողիկ մը, իւրաքանչիւր զար երանգ մը պիտի աւելցնէ աւելի կատարեալ կերպով զձեռն պատկերը «այլմեկ Դիմիլի», Յիսուսին, որ թէպէտ միշտ նոյն՝ բայց այլազան գոյներով աւելի փառաւոր պիտի շարունակէ փայլել զարերու մէջն: Քրիստոնէութեան նշանաբանը պէտք է ըլլայ, միշտ Քրիստոսով դիպի յոռաջ:

Տ. Ճ. ԽՐԼՈՒԵԱՆ

«ՏԷՐ, ՄԵՋԻ ԱՂՈՔԻ ԸՆԵՆՆԱՆ ՍՈՐՎԵՑՈՒՐ»

Կարելի չէ Աւետարանը կարգաւ եւ չ'ըզգալ թէ Յիսուս իր խորաթափանց աչքերով կը քննէ որտեղ, քօղաղերձ կ'ընէ միւր ներքին մաքր: Յիսուս երեսոյթներուն ետեւը շարժառիթները տեսնող աչք մ'ունի, որովհետեւ Աստուծոյ պէս կը նայի:

Իր այս խորաթափանց աչքերովը Փարիսեցի եւ գալիլեաներուն ազօթքներուն մէջ կեղծաւորութիւնն էր զատ ուրիշ բան չէր տեսնէր

Յիսուս: Աղօթքը Աստուծոյ հետ հաղորդակցութիւն է, այսինքն երկու բարեկամներու պէս խօսակցել է, մտիկ ընել Անոր հայրական քաղձը ձայնին եւ կատարեալ զիատկութիւն ունենալ՝ թէ ինքն ալ քու խնդրանքներդ կը լսէ, զիտիկ իր երկնափայլ դէմքը սիրոյ եւ հաւատալով թէ ինք քեզ կը տեսնէ: Մէկ խօսքով աղօթել՝ Աստուծոյ հետ նոյնացում էր Յիսուսի համար:

Աղօթքը Փարիսեցիներուն համար Աստուծոյ հետ դէմ յանդիմանութիւն չէր այլ ցուցամոլութիւն: «Ու երբ աղօթք կ'ընես կեղծաւորներու նման չըլլաս. որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնները կայնելով աղօթք ընել, որպէսզի մարդոց երեւնան», (Մատթ. 23. 5): Ոչ թէ Աստուծոյ հետ խօսակցութիւն, այլ մենաբնութիւն էր. «Եւ փարիսեցիին կայնի էր ու առանձին այսպէս աղօթք կ'ըսէր. » ինքնիրեն (Ղուկ. 11): Անշուշտ հասարակ մահկանացու մը երբեք չէր կրնար կասկածիլ Փարիսեցիներու աղօթքին անկեղծութեան. անոնք ամենապիկեցիկ ստորոգելիքներ, ամենաբարձր մակդիրներ կ'ուղղէին Աստուծոյ հասցէին եւ սակայն Յիսուս իր խորթափառնայ աչքերով այդ թուժակարար արտասանութեամբ գեղեցիկ ամական եւ ոճերուն, ա՛յս բանազոգութեանց մէջ կեղծաւորութենէ զատ ուրիշ բան մը չտեսաւ: Եւ ամէն անգամ երբ կը լսէր այդ աղօթքները՝ Իր մաքուր սրտին խորիւրէն Յիսուս կուլար, տեսնելով որ Փարիսեցիութիւնը կրօնքին քաղցկեղը եղած էր:

Տխուր իրականութիւն մըն է, զոր ստիպում էինք խոստովանելու, թէ այսօր մեր աղօթքներն ալ ընդհանրապէս Փարիսեցիներու աղօթքին չափ եւ աւելի կեղծ եղած են: Աղօթքը կեանքն իսկ է, երբ աղօթքը կեղծիք դառնայ՝ Աստուծոյ իրականութիւն ըլլալէ կը դադրի: Այսօր՝ մենք զմեզ աղօթաւէր, կրօնասէր, Քրիստոնեայ նկատողներու բացարձակ մեծամասնութեան համար՝ Աստուծոյ ահաւն մը, լոկ զազափար մ'ըլլալէ զատ ուրիշ բան չէ: Մեր աղօթքներուն մէջ Աստուծոյ հետ երես առ երես չենք տեսակցիր, ճշմարտութեան հոգին, չ'իջնար մեր վրայ ու չենք լսեր Անոր մեղմ ձայնը, «Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ»: Սիրոյ արեգակը չ'ողողէր մեր սրտերը, որպէսզի Աստուծոյ

փառքը ճառագայթէր մեր դէմքերուն վրայ եւ մարդիկ տեսնելով զայն փառաբանէին երկնաւոր Հայրը:

Յիսուս աշխարհ եկաւ սորվեցնելու՝ թէ մարդը Աստուծոյ որդի է. այսինքն Աստուծոյ մարդուն մէջ կ'զգայ, կը խորհի եւ կը կամի, մարդուն հետ կը խօսակցի, կը նոյնանայ. այս՝, Աստուծոյ մարդուն մէջ եւ մարդուն միջոցաւ կ'ստեղծագործէ, կեանք, աւելի կեանք, զօրութիւն, լոյս, խաղաղութիւն կուտայ աշխարհի: Մենք՝ մեր մէջ բարութիւն, ճշմարտութիւն սէր եւ ծառայութեան հոգին ստեղծագործող այս Աստուծոյ լուր չունինք. աղօթքը զԱստուծոյ մեղի այնպիսի իրականութիւն, ներկայութիւն ընող ազդակ մ'ըլլալէ զաղրած է: Մեր միակ խնդրանքը Մեծ վարդապետէն ա՛յս պէտք է ըլլայ. «Տէ՛ր, մեզի աղօթք ընել սորվեցուր»:

Ի՞նչ է Յիսուսի վարդապետութիւնը աղօթքի մասին: «Իսկ երբ զուն աղօթք կ'ընես, մտիւր քու ներքին սենեակդ ու զուգը պոյէ եւ աղօթք ըրէ քու հօրդ, որ զազառեղ տեղ կը գտնուի. եւ քու հայրդ որ գաղտնեղ կը տեսնէ քեզի յայտնապէս հառուցում պիտի ընէ»: (Մատթ. 23. 6). Անշուշտ Յիսուս ըսել չուզեր որ անպատճառ սենեակի մը մէջ առանձնանալու ենք աղօթելու համար: Ներքին սենեակը սիրտն է, ո՛ւր միայն կարելի է տեսնել զԱստուծոյ, եւ հաղորդակցիլ անոր հետ:

«Երանի անոնց որ սրտով մաքուր են, վստիկ անոնք պիտի տեսնեն զԱստուծոյ»: Իսկ, ճշմարիտ եւ Սէր է Աստուծոյ. քարի, ճշմարիտ, եւ սիրող սի՛րտ մը միայն կրնայ տեսնել զԱյն: Մեղմ ու քաղցր է ազաւանակեալ հոգւոյն բոցեղէն լեզուն. իրենց սրբապղծութեամբ սրտին ժխտը լռեցնողներ միայն կրնան լսել զԱստուծոյ: Պէտք է որ սիրտը մաքրուի հոգւոյն լռեցնողներ, հպարտութեան, տախտակեան անասնական կիրքերէն, եւ անոնց տեղը սիրոյ, հեղութեան, ծառայութեան, զոհողութեան անզուպ բաղձանքն ու տրամադրութիւնները դրաւեն: Մինչեւ որ Աստուծոյ մեղի անզուպ բաղձանք մը չըլլայ չենք կրնար աղօթել: Ինչպէս որ եղջիրուն ջուրի վտակներուն կը փափաքի, նոյնպէս ալ իմ անձս քեզի փափաքի, ո՛վ Աստուծոյ:

գիւ ծարաւի է Աստուծոյն, կենդանի Աստուծոյն»: Անոնք միայն պիտի կարենան զբաւնել զԱստուծո, որոնք իրենց սրտին զուոր կրնան զոցել Աստուծոյն զատ ուրիշ ամէն բանի և անգուպ կարօտով մը կը ջանան փրկուիլ զԱյն: «Երանի անոնց որ անօթի ու ծարաւ են արդարութեան, վասնզի անոնք պիտի կշտանան:

«Եւ ազօթք ըլէ քու Հօրդ որ զաղտուկ տեղ կը գտնուի»: Գաղտուկ տեղ զտնուոյ մէկը գտնելու համար պէտք է թաքստոցին մէջ գաղտուկ տեղը մտնել, այսինքն աներկուութեան, ինքզինքդ կորզնցնել, անձդ ուրանալ պէտք է: Աստուծո ինքզինքը ուրացած, սահմանած է, ցուցամու ճէ, հեղ է: զԱստուծո տեսնելու և անկէ տեսնուելու համար անհրաժեշտ է հասմուլութեան հպարտութեան լեռներէն հեկութեան ձորը իջնել, այսինքն Աստուծոյ հետ նոյնանալ, Անոր պէս լլլալ:

Յիսուս այսպէս կ'ազօթէր, ազօթքը իրեն համար այլակերպութեան լեռնէն տառապանքի ձորին մէջ իջնալ էր: Սիրոյ Արեգակին կենսատու ճառագայթները զործածեց ո՛չ թէ հեշտառէր, հասմուլ Պետրոսին նման իր ետին նիւթիցէն վրանին մէջ կղզիացնելու, ա՛յլ արեւուն նման երկնային բարձրութիւնէն երկրի մինչև ամենախորին խաւերը խոնարհելով խաւարը փարատելու, մարդոց հոգւոյն մէջ թափանցելով կեանք, զօրութիւն, խնդութիւն տալու համար: Յիսուս Աստուծոյ զօրութիւնը զործածել ուզեց՝ ո՛չ թէ սոկեղէն գահերու վրայ ազամանդակու թագերով պըսակուած բազմելու, ա՛յլ մինչև մոտորը խոնարհելով սիրելու և ծառայելու: Երկինքի ճամբան մոտերի մէջէն կ'անցնի:

Ազօթքը կեանք ու զօրութիւն է: Յիսուսի պէս ազօթող Քրիստոնեայ մը լեռներ տեղափոխող, աշխարհը տակն ու վրայ ընող, երկինքը երկրի վրայ հաստատող, Աստուծոյ պատկերացումը եղող մէկն է: Քրիստոնէական հաւատքին, յոյսին և սիրոյն, այս՝ երկինքի բանալին է ազօթքը:

Այսօր աւելի քան երբեք մեր ամենաեական պէտքն է Մեծ Վարդապետին ոտքերուն առջև ծնրադրել և խնդրել, «Տէ՛ր մեզի ազօթք ընել սորվեցուր:»

Գաիլոյի

Հ. Յ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԿԱՏԱՐԵԱԼ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

«Աւ աշխարհի մէջ առ բաները կը խօսիմ, որ իմ ուրախութիւնս իրենց անձերուն մէջ կատարեալ ունենան»: Յովն. 17. 13:

Մարդ կ'ապշի կը Ֆիսայ լսելով Յիսուսի այս խօսքերը, մանաւանդ երբ նկատի առնէ այն պարագաները, որոնց մէջ կը գտնուէր ինք այս խօսքերը արտասանած պահուն. և պահ մը կը փորձուի Յիսուսն ալ նկատել պատմութեան մեծխօսիկներէն մէկը:

Նիւթապաշտ և ծանծաղամիտ մարդոց աչքին պարզապէս ծիծաղելի է տեսնել մէկը որ հակառակ իր ամէն կերպ զրկանքի, հաւածանքի և թշնամութեան ենթակայ ըլլալուն, ուրախութիւն, երջանկութիւն ու փառք կը խոստանայ ուրիշներուն: Բայց աւելի զարմանալին երջանկութեան և ուրախութեան համար յանձնարարած միջոցն է: Աշխարհ փառք և պատիւ կը խոստանայ անոնց որ զօրաւոր են ու հարստահարող. իսկ Յիսուս կ'ըսէ. «Երանի հեղերուն և հալածեալներուն»: Աշխարհ երջանկութիւն և ուրախութիւն կ'որոնէ պերճանքի ու պալատներու մէջ, Յիսուս կ'ըսէ. «Երանի հոգւով աղքատներուն», «Քուրդոր ունեցածդ ծախսէ ու երկինք դանձ պիտի ունենաս»: Աշխարհ կ'ըսէ. «Առ և իւրացուր», Յիսուս կ'ըսէ. «Տուր և մի՛ վրանար»: Ի՞նչ զարմանալի հակասութիւն:

Կենսական հարցը այս է սակայն՝ թէ ո՞րը ճշմարիտ է, աշխարհի ըմբռնումը՝ թէ Յիսուսի հասկացողութիւնը:

Կրնանք չճշտականապէս ըսել՝ թէ աշխարհ չէ կրցած իր սկզբունքներովն ու օրէնքներովն ուրախութիւն տալ իր հետեւորդներուն. վկայ պատմութիւնը իր Մեծն Աղեքսանդրեանովն ու Նարոյիօններովն, ամէն զարու մեծահարուստ Կրեոսներովն և շատ մը անհաւատ գիտուններովն ու փիլիսոփաներովն: Իսկ Յիսուսի հետեւորդները իր սկզբունքներուն համեմատ ապրելով՝ միշտ վայելած են սրտի այն կատարեալ ուրախութիւնն ու խաղաղութիւնը, զոր Յիսուս խոստացած էր իրենց վերոյիշեալ պայմաններով: Ուստի այս հակասական արդիւնքը մէջտեղէն վերցնելու և կատարեալ, անխառն և տեսական ուրախութեան տիրանալու համար մարդիկ պարտին ըմբռնել և իւրացնել պատճառ և արդիւնքի

մասին Բրիտանիայի հայեցակետը. և այս կարելի է հետևել ապամաններով:

Ա. Յիսուսի էութեան մասին մարդիկ իրենց գաղափարը շտկելու են հիմնովին, քանզի՝ Անոր սկզբունքներուն խօսքով ու կեանքով հակասել, պարզապէս կը նշանակէ պէյն իր զիրքէն վար դառնալ: Նիւթապաշտ հակումներէ զերծ՝ երբ ընդունինք թէ Յիսուս յիշատակաւ մարդ, կատարեալ Աստուած միանգամայն, ա՛յ Ան կը գաղթի մարդոց աչքին ինքիցէն մատուրին մէջ ծնած անգոր եւ թշուառ մանուկը ըլլալէ, և զժուարութիւն չմնար հաւատալու թէ Աստուած ամենագոր է ամէն բանի մէջ:

Բ. Յիսուսի նպատակին մասին մեր գաղափարները ուղղուելու են:

Ինչպէս Յիսուսի ժամանակակից Հրեաները կ'հրեակայէին ու կ'ակնկալէին յանձին Մեսիայի մեծագործ ազաւար մը տեսնել՝ ու չէին կրնար հաշտեցնել Մեսիայի մասին իրենց ունեցած գաղափարը Յիսուսի կեանքին հետ. այսօր ալ քիչ չեն այնպիսիներ, որոնք չեն կրնար մարտել Աստուծոյ մարդացած ու Աւետարաններու նկարագրած կերպով չարչարուած ու խաչուած ըլլալուն գաղափարը: Անցեալ յամառ, շոգեկատրքին մէջ Թորք հաճի մը հետ խօսակցութեան միջոցին, Յիսուսի կեանքին ու մահուան պարագաները ու նպատակը երբ կը բացատրէի, մարդը այլալլած, «Մեղա՛յ, մեղա՛յ, քաւ լիցի որ Աստուած մարդոց ձեռքով չարչարուի, ինչե՛ր կ'ըսես բարեկամ», ըսելով գարմանք կը յայտնէր: Բայց բնաւ պարմանալու բան չի մնար երբ մենք կարենայինք հասկնալ յաչս Աստուծոյ մարդուն իրական արմէքը: Հին Կտակարանի մարգարէն կ'ըսէ. «Անիկայ հրեշտակներէն քիչ մը վար զրիւր», իսկ Յիսուս կ'ըսէ. «Փայէ՛ք իմ եղբայրներու ըսէք...», «Ան կ'ըլլիմ իմ Հօր քով եւ ձեր Հօր քովը», «... որ անոնք ալ մեր մէջը մէկ ըլլան», և այլն: Այլ ինչո՞ւ պարմանալ որ Աստուած մարդացած իր բնութեամբ եւ կերպարանքով ստեղծուած մարդը ինկածութենէն փրկելու: Ահա՛ Յիսուսի նպատակը, ինք երկիր իջաւ որպէսզի երկիրը երկնային ընէ, մեղքի մէջ գետնաքարը սողացողը Աստուածակերպ փայլեցնէ, Աստուած և մարդ հաշտուի միանգամ ընդմիշտ, վերջապէս Չարը յաղթուի եւ Աստուած փառաւորուի:

Գ. Աստուծոյ մասին մեր գաղափարները ուղիղ ըլլալու են:

Դարեր շարունակ մարդկութիւնը ամէն տեսակ աստուածներ ունեցեր և անոնց ամէն կերպ այլանդակ յատկութիւններ վերագրած է. բայց Յիսուսի յայտնած Աստուածը «Երկնաւոր Հայրն» է, ամէն բարեաց աղբիւրը, յաւիտենական Սէրը, «Որ ա՛յնչափ սիրեց աշխարհը որ Իր Միածին որդին տուաւ...»:

Ո՛հ, երբ մարդ գիտակցի թէ ինք ասանկ Հօր մը զաւակն է և ամէն բան Անոր ձեռքէն մեզի կուգայ, թէ Ան մեր բոլոր փորձութիւնները, ցաւերը և զրկանքները պիտէ, թէ այս վաղանցուկ և խաբուսիկ կեանքէն անդին կայ յաւիտենականը և իրականը, այն ատեն Յիսուսի պէս փոթորկալից ծովու վրայ իսկ կըրնայ խաղաղ քնանալ և ուրիշներն ալ քաջալիւրիւ ըսելով, «Մի՛ խոտովիք, մի՛ վախճաք». կրնայ թշնամիներէն հալածուիլ ու տառապիլ իսկ, սակայն ամենայն իրաւունքով ըսել, «Ան աշխարհին յաղթեցի». կրնայ խաչի մահուամբ մեռնիլ, բայց իր վերջին շունչով յայտարարել աշխարհին թէ կատարեալ եղաւ, Հօրը ծրագրիւր զործադրուեցաւ:

Կուզե՛նք ամեն պարզապէս տակ կատարեալ և իրական ուրախութիւն ունենալ, պէտք է մշակենք այն յարաբերութիւնը որ Որդին Մարդոյ ունի իր երկնաւոր Հօրը հետ:

Ս. ԼԱԼԷՆԱՆ

ՆՅՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պիթիստէն մեզի զրկուած զրութեան մը մէջ կրօնական դատախարակութեան մը պէտքը կը շեշտուի: Պատերազմէն ասդին կրօնական դատախարակութեան չէ տրուած նախապատերազմեան կարեւորութիւնը: Նոր սերունդը, կ'ըսուի հոն, չառ տգէտ է իր պատկանած եկեղեցիին զաւանանքին անցեալին եւ իր կրօնական պարտականութիւններուն մասին: Ինքն եւ մամուլը բաւական չեն զոհացնելու այս պէտքը: Կիրականօրեայ Դպրոցը պէտք է աւելի կարեւորութիւն բաւանայ եւ մանաւանդ մասնաւոր զբօսայիտեր պէտք է հրատարակուին նոր սերունդին ճանչցնելու իր եկեղեցին եւ կրօնքը: Տգիտութիւնը՝ անտարբերութիւն, եւ անտարբերութիւնը աւերում կը գործէ երիտասարդներու կեանքին մէջ:

Պէյրուքէն Պատ. Ե. Կէօքկէօղեան կը գրէ:
Սկսած ենք Ս. Գրքի ուսումնասիրութեան որ տեղի կ'ունենայ ամէն Ուրբաթ իրիկուն, դասախօսութիւններու համար կը զործածենք յատկապէս Ամերիկայէն բերել տըրուած գիրքերը:

Մեր եկեղեցիին Ե. Ք. Ջանից Միութիւնը, Փետր. 24ին գիշերը, վիճարանական ժողով մը սարքեց: Տիարք Բ. Կիւլէսէրեան եւ Յ. Արզարեան պաշտպանեցին սա թէզը թէ պատերազմը կարեւոր է եւ օգտակար. իոկ երկու հակաճառողները, Տիարք Տ. Խնդրունի եւ Ե. Մարգարեան, ջանացին փաստել թէ պատերազմը անկարելի էր եւ ազիտաւոր է մարդկութեան: Իրաւի երկու թէզերն ալ պաշտպանողները իրենց լաւագոյնը ընելու համար շատ ջանք թափած էին: Ժողովուրդը զոհ սրտով մեկնեցաւ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՊՐԻՍԻՍ

ԿԻՐԱԿԻ. Յաղորդ Հաւասքը. Մասք. 8. 23-24:

Բնութեան անգուռայ երկու ոյժերը հոգը եւ ծովը են: Բու Տէրդ խօսքովը երկուքն ալ, փոթորկաբեր հովը եւ ալեկոծ ծովը, լեկուց եւ խաղաղեկուց: Հաւատա Անոր, քու խոռովաւ սիրադ ալ պիտի հանդարտի:

Աղօթք. Ո՛վ Յիսուս, փառք Քիչի, ամեն դարու ներշնչուած հոգիներուն համար, որոնք կեանքի աննպաստ պարագաներու մէջ երկնային թաղաւորութեանդ տեսիլքովը խաղաղութիւն գտան իրենց սրտերուն մէջ եւ յոյս արծարծեցաւ իրենց հոգիներուն մէջ: Թող իմ տառապեալ հոգի՛ն ալ խաղաղութիւն գտնէ Քիչմով: Անուանդ համար: Ամէն:

ԵՐԿՈՒՇԱԲԻԹԻ. Լեզուի Մաքրութիւն. Մասք. 5. 33-37:

Լաւ խնամէ լեզուդ, մաքուր պահէ զայն: Ժշմարտութիւնը անշտափ սիրէ, որ խօսքդ երգումիդ չափ փատահութիւն ներշնչէ ուրիշին վրայ: Լեզուդ զործածէ շինութեան համար, անով մէկու մը սիրաւ մի՛ վշտացներ եւ պատիւ մը մի կործաներ: Գործածէ զայն մխիթարելու եւ քաջալերելու համար:

Աղօթք. Երկնաւոր Հայր, օգնէ ինձ որ այսօր նկարագրի պարիսպին վրայ արթուն պահապան մ'ըլլամ, որպէս զի չալը ինձ չի կրնայ մօտենալ: Օգնէ ինձ, որ բարի ազդեցութիւններով ուրիշ զաւակներուդ ալ բարի

պահապան ըլլամ: Յիսուսի անունովդ: Ամէն:
ԵՐԵՔՇԻ. Երկայնակիս սկռ. Ա. Կորն. 13. 1-7:

Համբերող սէր: Ո՛րչափ պէտք ունինք անոր, մեր տուններուն զպրոցներուն, եկեղեցիին, շուկաներուն մէջ, ամեն տեղ եւ ամէն պարագաներու տակ: Այս մեծ Քրիստոնէական առաքինութեան ի՛նչ ըլլալը Յիսուսէն սորվելու ենք, Անոր հետեւելով կեանքի ամէն պայմաններու տակ:

Աղօթք. Սիրելի Յիսուս, շնորհէ ինձ որ Քիչ գիտնամ եւ սիրեմ եւ Քիչմով ուրախանամ: Եթէ կարող չ'ըլլամ այս օր, օգնէ ինձ որ բոլոր կեանքիս մէջ օրէ օր դէպ ի այս գաղափարականը յառաջանամ: Օրէ օր քու սիրոյդ նմանը իմ մէջս զօրանայ: Սիրոյդ համար: Ամէն:

ՉՈՐԵՔՇԻ. Բռնիջ հաւասքը. Յովն. 5. 1-9:

Մարդը ինչ թշուառ էր, երեսունըութ տարի հիւանդ: Ո՛րչափ անոք եւ անօգնական էր, մէկը չունէր զինքը բուժիչ ջուրը իջեցնելու: Աւելի ցաւալի բան մը, այս կեանքին վարժուած էր, աւելի լաւին համար յոյս եւ փափաք չունէր: Յիսուս մօտեցաւ անոր եւ ըսաւ, «Ասողջանալ կուզե՞ս»։ Իմ աշխարհիս մէջ միշտ հիւանդ մնալու անպարտականութիւն չկայ: Մահիճդ վերցո՛ւր, ել եւ գնա:

Թշուառ հոգի. Տէրը քիչի ալ կը հրամայէ, միշտ հոգերու մէջ թաղուած մնալու պէտք չունիս. հաւատա՛ւ եւ փրկուէ:

Աղօթք. Յիսուս Փրկիչ, ամէն նոր օր իմ ներսիդիս նոր հաւատք եւ փատահութիւն թող ներշնչէ: Իմ կեանքս Քուկիրիդ հետ համաձայն լինի: Վախերս եւ յուսահատութիւնս քաջութեան եւ յոյսի փոխէ: Համոզուած գոյացուր իմ մէջս, որ Բու քովդ բան մը պահասէ: Պատուական անունովդ: Ամէն:

ՀԻՆԳՇԻ. Հիւնը եւ նորը. Մասք. 5. 38-48:

Օտարութիւն, տաւրութիւն, չարութիւն, նախանձ, վրէժ, ատոնց ամէնը հին են: Քրիստոնեան պէտք է մերկանայ ատոնցմէ: Եղբայրութիւն, սէր, բարութիւն, անձնուրաձութիւն, համբերութիւն, ատոնք նոր են: Յիսուսի պատուէրն են. ատոնց անոնց երկնից թաղաւորութիւնը չի գար: Պէտք է Քրիստոնեան տոնք հազնի իր վրան:

Աղօթք. Ո՛վ Տէր, կուզեմ Քիչ հազնիլ եւ օրէնքդ պահել: Օգնէ ինձ որ Բու սէրդ ամեն մարդու ցուցնելու կարող ըլլամ: Խաչին կեանք

քը իմ օրինակս ըլլայ: Անուանող համար Ամէն:
ՈՒՐ. Աստուած եւ մեզմեզ. Մատթ. 6. 19-24:

Մին կամ միւսը: Աստուածասէր կամ արծաթասէր: Տէրոջ գաւաի կամ չարի գաւաի: Երկուքին մէջտեղը կայարան չկայ: Երկուքը միաժամանակ սիրել չկրնար ըլլալ: Երկուքին միասին ծառայել անկարելի է: Ամենատգեղ երեոյթը հակասական կեանքն է: Լոյսը եւ խաւարը մէկտեղ չեն կրնար կենալ: մէկ սիրտի մէջ Աստուած եւ Պէլիալ չեն կրնար բնակիլ: Ո՞վ մարդ, լոյսը, բարին, զԱստուած ընտրէ: Նա է կեանք, յոյս եւ զօրութիւն:

Աղոթք. Երկնաւոր Հայր, սուտ փափաքներու կախարհութենէն, նուաճողացուցիչ հաւճոյքներու խաբէութենէն, գիտ Դուն ազատէ: Լուսաւորէ մեր աչքերը, սրպէսզի մեղքը, չարութիւնը իրենց բուն գոյներովը տեսնենք: Մեր հոգիները եւ մարմինները Բու հակադրութեան եւ ազդեցութեանդ տակ ըլլան: Քու օրէնքդ պահելու եւ սիրելու մէջ երջանկութիւն գտնենք: Փրկչին համար: Ամէն:

ՇԱԲԱԹ. Տէր Մեր Ապրակնը: Մարթ. 91. 1-7:

Աստուծոյ վրայ վստահութիւն ունենանք: Ինքը մեզ մեզմէ աւելի կը ճանչնայ: Անոր սէրը մեր վրայ մշտապէս է: Գիտէ թէ ի՞նչ է մեզի սպառնացող վտանգը, ինչ են մեր տկարութիւնները, պէտքերը, ցաւերը, չարը ո՞ր կողմէն կը յարձակի եւ մեզի վրաս կուտայ: Անոր ապաւինինք եւ միշտ ապահով ըլլանք:

Աղոթք. Ամենակարող Տէր, մեր բարիքը Դուն ես, մեր սիրտերուն մէջ բնակէ: Երբ մեզի կանչես, լսող տկանջ տուր մեզի, որ Քու ձայնիդ հետեւինք: Նեղութեան տակ մեզի ապաւենէ իզիր: Միաձին որդւոյդ Յիսուսի անունովը: Ամէն:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մարկ. 16. 1-20

Ավարիչ Տ

Յարութեան մասին Մարկոսի տեղեկագրութիւնը հրեք մասերէ կը բաղկանայ: 1) Առաջին տեղեկութիւն Յիսուսի յարութեան մասին, 1-8: 2) Յիսուսի երեւոյթները, 9-18: 3) Քառասուն օրէ վերջ, 19-20:

Խորհրդածարխնիք. 1) Նկատի առ ինչ որ գրուած է օրուան, ժամուան, անձերու գերեզմանին, հրեշտակներուն երեւնալուն եւ

պատգամին, Պետրոսին եւ կրնէրուն վրայ եղած ազդեցութեան մասին:

2) Այնպէս կը թուի թէ այս համարները Յիսուսի յարութենէն վերջը Իր երեւումներուն մէկ ամ փոփոխ են: Կ'երեւի թէ Աւետարանի բնագիրը Բ. համայով կը վերջանար, եւ թէ այս ամփոփումը պատմութիւնը լրացնելու համար աւելցուած էր, թերեւս միայն Մարկոսի Աւետարանը ունեցող ընթերցողներուն օգտին համար: Յիշուած երեւումները միւս Աւետարաններու մէջ պատմուածներն են: ա) Կրնէրուն, մասնաւորապէս Մաղղաղինացի Մարիամին (Մատթ. եւ Յովհ.): բ) Էմմաուսի ճամբուն վրայ (Ղուկ.) գ) Իրիկունը տասնըմէկին (Ղուկ. եւ Յովհ.). դ) Գալիլայի մէջ (Մատթ.): Պօղոս քիչ մը տարրեր եւ աւելի կատարեալ ցանկ մը կուտայ (Ա. Կորն. 15. 4-8):

Դիտելի է անհաւատութեան (11, 13, 14, 16) եւ հաստատողական նշաններու (18, 19, 20) վրայ գրուած շեշտը:

3) Քրիստոսի փառաւորումը, առաքեալներուն վկայութիւնը, Քրիստոսի չարունակող գործունէութիւնը իրականութիւններ էին, որոնք նախկին բոլոր Քրիստոսեաններու կողմանէ ճանչցուած եւ ընդունուած էին:

Դասեր. Ի՞նչ կը շահինք Յիսուսի յարութեան ծանօթութիւնովը: Եթէ Յիսուս յարութիւն չ'առնէր, կեանքիդ մէջ գործնական նապէս ի՞նչ տարրերութիւն յաւաք պիտի գար: Յարութիւնը մեզ ի՞նչ խորհելու կ'արգարացնէ: 1) Յիսուս յարութեամբ Մեխիա յայտարարուած (Հոով. 1. 4, Յովհ. 2. 18-22, Մատթ. 12. 39-40): 2) Մահը Անոր վրայ ալ չի կրնար իջնել (Հոով. 6. 9): 3) Քրիստոսի շարունակող սէրը (Հոով. 8. 33-35): 4) Ան հիմայ մեզի կրնայ օգնել (Եբր. 7. 25): 5) Անոր վարդապետութիւնը Աստուծոյ էր (Յովհ. 8. 28): 6) Հաւատացեալներու համար Յիսուսի ունեցածին նման հանգիւրձեալ կեանք մը կայ (Ա. Կորն. 15. 20): 7) Մեղքի գէժ մեր պայքարին մէջ պէտք է տակաւնք (Եբր. 12. 2-3): 8) Մեր ջանքը յաւիտենական արդիւնք պիտի ունենայ (Ա. Կորն. 15. 58):

Ատրպողական պատճառով մը Ապրիլ մէկի Կ. Դպրոցի Դասը միայն Տաճկերէն տպուած է:

ՍԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԹԱԿՍԻՈՐԻՆ ՆԵՐՈՒՄԸ

«Վերջապէս եթէ օր մը գտնեն», ընդմիջեց օտարականը՝ որուն խոժոռ դէմքը աղջկան խօսքերուն վրայ սկսեց Էին մեղմանալ։

«Ահ, այն օրը, մենք կորսուած ենք», պատասխանեց Մարիա, «քանի քանի տնգամներ փափաքեցայ երթալ ու թաղաւորին ոտքը խնայելով ինծի ու հայրիկիս համար ներում խնդրել, բայց հայրիկս կ'ըսէ թէ տախկայ մեր մահուան պատճառը պիտի ըլլար, բայց ինչո՞ւ... չէ՞ որ տաճնէն զեղեցիկ բանը ներելն է, միթէ թաղաւորը չ'պիտի փափաքէ այդ զեղեցիկ ու աղնիւ բանը ընելու։ Ախ, երանի՜ թէ զիտնայի թաղաւորին տունը»։ Ու քանի մը ըսողէ լուծիւն տիրեց, օտարական որսորդը կը մտածէր... Ի վերջոյ Մարիա շարունակեց այսպէս. «Դուք բարի մարդ մը կ'երեւիք, արդեօք չէ՞ք կրնար օգնել ինծի, կը ճանչնա՞ք թաղաւորը, միթէ չէ՞ք կրնար զիս իրեն ներկայութեանը հանել. ո՛հ, որքա՛ն պիտի երջանկացնէք զիս ու խեղճ հայրիկս»։ Ու Մարիա ծնրադրած կ'ազաչէր արտասուելից լաքերով որպէս զի եթէ կարելի է անոր զուլթը շարժէ։

Որսորդը ոտքի ելաւ. «Դուն բարի աղջիկ մը կ'երեւի», ըսաւ ան, «այս գիշեր թաղաւորը որսի ելաւ այս անտառին մէջ. ես ալ իր հետը եղողներէն մէկն եմ, սակայն սաստիկ մոլթը ու ձիւնախառն փոթորիկը մեզի արգիլք հղաւ, զիրար կորսնցուցինք, ու քիչ մնաց կեանքս ալ պիտի կորսնցնէի, եթէ սա պատուհանը դրած ճրագդ իմ ոտքերս առաջ-

նորդած չ'ըլլար զի... խրճիթը։ Դուն, աղջիկս, իմ կեանքս փրկեցիր քու փոքրիկ ճրագովդ ու մեծ բարեսրտութիւնովդ»։ Ու գրպանէն փոքր բան մը հանեց, աղջկանը երկնցնելով ըսաւ. «Առ ասիկայ եւ հօրդ տուր, ու ըսէ իրեն որ վաղը թաղաւորին ներկայանայ իր պաշտօնին մէջ, ու ես կը խոստանամ որ այս կերպով պիտի ոտանաս հօրդ ներումը։ Վստահէ խօսքիս, մնաք բարով առաքինի խեղճ աղջիկս»։ Ու որսորդը զուրս ելլելով աներեւութացաւ անտառին մթութեան մէջ։

Մարիա սաստիկ զարմացաւ երբ որսորդին տուած ոսկին ճրագին մօտեցնելով անոր վրայի պատկերը տեսաւ՝ որը ճիշդ եւ ճիշդ նմանութիւնն էր զայն տուող անձին։

Մարիաի հայրը հեռեւեալ օրն իսկ ստացաւ իր ներումը։ (Վերջ)

ՀԱՆՆԵԼՈՒԿ 7

Գտիր ութը գիրերէ բաղկացած բարդ բառ մը, որուն՝ 6, 3, 8 գիրերը Հայերէն բայերէն մէկուն հրամայական եղանակն է։

4, 1, 4, 5 Մանկանց առաջին արտասանած առաջին բառերէն մէկը։

5, 8, 1, 8, 5, 4, Հայաստանի նշանաւոր լեռներէն մէկը։

7, 2, 5, Ծննդոց զբոյն մէջ գտնուող կիներէն մէկուն անունն է։

Վիճակով նուէր մը պիտի արուի լուծողներէն մէկուն Լ. եւ Յ. ի կողմանէ։

ՀԱՆՆԵԼՈՒԿ 8

Չորս հատ իրարու հաւասար եռանկիւններ չինէ միայն վեց լուցկիով, այնպէս որ եռանկեանց կողմերը մէյմէկ ամբողջ լուցկիէ կազմուած ըլլան։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԻՍՏՈՍ ԵՎ ԲԻՐՈՒՄԻՆԻՍ

Քրիստոս եւ Բիւսոննիս

Տ. Ճ. ԽՐԼՈՒԲԵԱՆ

ԹՕԴՈՒԱՄԵՆՐ

ՏԿՐ, Մեղի Աղբի ընկ խաղաղութեամբ

ՊԱՏ. Հ. ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄԵԱՆ

Կաստեալ Ուրախութիւնը

Ս. ԼԱԼԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂԹԹ

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, Գիտական, Կրթական երկչաբաթաթերթ։

Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. Խրլորեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԿԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 ՄԼՃԻՍ

Արտատահման » » 1 ՏՂԻՐ

Հասցէ—

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP SYRIE